ՈՍՏԻԿԱՆԱՐԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ.

Բաժին հոգեւորական գործոց այլադաւան ազգաց.

ՀԱՏԱԾ Բ. ԴՐԱՍԵՂԱՆ Ա (9 ՅՈՒԼԻՍԻ 1858) Թ. 110.

ԸՍ հրամանի վերնագրեալ. ինքնակալին.

ՅԱՂԱԴՍ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՅ ԻԹԷՈԴՈՍԻԱ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՆՁԻՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՀԱՅՈՑ.

Իրնագրին ձեռամբ Տեառն Ոստիկանի Ներքին գործոց գրեալ է. « Ինքնակալ Կայսրն հաճեցաւ յակն արկանել. »

Ոստիկանն ներքին գործոց

Ձեռնագրեալ, Ս. ԼԱՆՍԿՈՅ.

Հաւաստեալ, Կոմս ՍԻՎԵՐՍ.

Դ՝ յուլիսի 1858, Իփեբերոգ :

MINISTÈRE DE L'INTÉRIEUR.

Division des affaires religieuses des nations hétérodoxes.

IIe SECTION, Ier BUREAU (9 JUILLET 1858) N° 110.

Par ordre de S. M. l'Empereur.

POUR LA FONDATION DANS LA VILLE DE THÉODOSIE D'UNE ÉCOLE ARMÉNIENNE.

L'original porte, écrit de la main de M. le ministre de l'Intérieur : « L'Empereur a daigné examiner. »

Le Ministre de l'Intérieur,

Signé : S. LANSKOY.

Contre-signé : Comte SIVERS.

4 juillet 1858, à Saint-Pétersbourg.

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՅԵԱՏ

Օգոստոսի 17ին Նաշի ազգային դպրոցը մեծ յաջողութեամբ տարեկան քննութիւնները կատարեր է, ներկայութեամբ ազգային եւ տեղւոյն իշխանացը : Ամենքն առհասարակ մեծապէս գոհ են եղեր եւ զարմացեր աշակերտաց ցուցուցած յառաջադիմութեանը եւ վարժապետաց խնամոցն եւ ջանիցը վրայ : Կրօնի եւ ռուսմանց Ոստիկանն ալ իւր մեծ գոհութիւնը յայտնելու համար հետեւեալ պատուաւոր վկայագիրը դրկեր է առ իւրաքանչիւր յարգելի վարժապետս, զոր մեր ազնիւ նախկին աշակերտն եւ դրդակիցՊ. Սողոմոն Դրանխոյեան կնաղորդէ մեզ, եւ զոր սիրով կնրատարակեմք իփառս եւ իրաջալեր այն ազգասէր յարգելեաց, վստահելով որ իրենց գեղեցիկ օրինակը վառէ նաեւ այլոց վարժապետաց եռանդը ինախանձաւոր նմանութիւն ազգասէր ջանից եւ փութոյ :

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆ ԿՐՕՆԻ ԵՒ ՀԱՅԱՐԱԿԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՌ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԻՄԱՑՐԱՓԱՂԱՔԻՆ.

« Այս գործակալութեան պաշտօնեայն Տօքթօր Պ. Անտոն Վելիին իրեն վկայութեամբը յայտ կընէ թէ ներկայ տարւոյս Հայոց վարժարանին երկրորդ վեցամսեայ, այսինքն՝ ամարային քննութեան վախճանը խիստ գոհացուցիչ եղեւ. որով Գործակալութիւնը ստոյգ ըլլալով որ այսպիսի բարի վախճան մը միայն այն Հոգաբարձութեան անխոնջ խնամոց արգասիքն է, ուստի մեկ կողմանէ բոլոր արդիւնքը յարգելու փափաքով՝ իւր կատարեալ շնորհակալութիւնը կայտնէ այն Հոգաբարձութեան, յուսալով որ այսուհետեւ եւս առաւել պիտի ջանայ այս ուսումնարանիս արդի ժամանակին եւ պարագայից պահանջած կանոնաւոր ընթացքն ալ տալ, որպէսզի արժանի ըլլայ Տէրութեան բարերարութեանը եւ պատուոյն Հասարակութեան՝ որոյ շահերը իրեն ձեռքը յանձներ է. ուրիշ կողմանէ ալ ասոր հետ դրկած հրովարտակներովը նոյնպէս իւր շնորհակալութիւնը կմատուցանէ ՊՊ. վարժապետաց նմին Վարժարանի. ինչպէս՝ առ. Դամիանոս Խաչերես Դարագաշեան, Յովհաննէս Գալստեան եւ առ. Բիդարն Լուսիկ Սրմազաշեան՝ որ նոյնպէս այս բարի վախճանը ստանալու ջանք ըրեր է, եւ կխնդրէ զՀոգաբարձութիւնը որ այս հրովարտակները յիշեալ անձանց ձեռքը տրուին » :

ԱՌ ԽՈՐԻՆ Վ. ԽՈՐԽՈՌՈՒՆԻ.

Հետեւեալ նամակը իլոյս կընծայեմք՝ ըստ խընդրոյ առաւել նամակագրին՝ քան յողոքաւոր գովեստից գովողին : Սրտի ազնիւ զգացմունքները արժանի են որ յամենեցուն խրախուսուին :

Գերապատիւ Տէր,

Ներողամիտ եղէք երիտասարդի մը որ թէպէտ անձամբ Ձեզի ծանօթ ըլլալու պատիւը չունի, բայց դրդեալ յերախտագիտութենէ, որ դուք արծարծեցիք իրեն հոգւոյն մէջ, Ձեր Ազգասիրական յօդուածներովը Մասեաց Աղաւնոյ էջերուն մէջ, իրեն անհրաժեշտ պարտք կնամարի իւր պարտուպատշաճ յարգանքը Ձեզ նուիրել : Կարելի է արդեօք որ մէկը կարդայ այն սմանչելանիւս տողերը, որով մեր նախնեաց փառքը մեզի կյիշեցընեն, եւ ազգասիրութեան հոգւով չտոչորի :

Կարելի է արդեօք որ Հայ մը Ձեր քաղցր քնարին վրայ երգուած սգաւոր Հայասանին ողբերը լսէ, ու առ. հարկի ցանք աչուրներէն դէպ իներս ծորած աղի արտասուաց հեղեղով չողողի : Ո՞հ, Մասեաց մուսային նուիրական քնարը քանի որ Ձեր ձեռքն է, գոնէ Մայր Հայասանեն բաժնուած օտար եղերաց վրայ մնացած որդիքս, սա միխիթարութիւնն ունիմք որ, մեր սիրելի Մօր դեռ ողջ ըլլալուն քաղցր լուրերը Ձեզմէ կընդունիմք, եւ կուզամք սիրելի Ծնողէս հեռու մնալնուս համար միայն, եւ ոչ թէ անմայր որբ ըլլալուս համար, ինչպէս իզուր ջանացին շատերը զմեզ համոզել : Օրհնեմ այն ձայնը որ Ազգայնոց կկարդայ « Սէր եւ Հայրենասիրութիւն, » եւ կրկին օրհնեալ երբ ազգայնոց եւ օտարաց միանգամայն կաղաղակէ « ՕՐՀՆԵԱԼ ՈՐ ՍԻՐԵՆ ԶԷՆԴՆ ՀԱՅԱՍՏԱՆ » :